

ԲԱՑ ԴԱՍԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ

ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՅԱԶՈՂ ՓՈՐՉ ՄԸ

ԼՈՆՏՈՆԻ ԳԷՈՐԳ ԹԱՀԹԱՅԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Դոկտ. Հիլտա Գալֆայեան-Փանոսեան.

Նոր Տարիէն ամիս մը առաջ հրաւեր ստացայ Լոնտոնէն: Զիս կը հրաւիրէին իմ հեղինակած "Օտարախօսներու համար հայերէնի ձեռնարկ"-ի ('Manuel d'arménien occidental pour les non-arménophone') մասին դասախօսելու, այս լսատեսողական մեթոտի (méthode audiovisuelle-structuroglobale) գիտական սկզբունքները բացատրելու իրենց ուսուցիչներուն: Խնդրեցին նաև որ դասախօսութենէն զատ "բաց դասաւանդութիւն" մը կատարեմ իրենց աշակերտներուն:

Հրաւերը ընդունելէ առաջ հարցուցի թէ քանի՞ ուսուցիչ և քանի՞ աշակերտ ունին: Պատասխանը եղաւ թէ 17 ուսուցիչ և 130 աշակերտ ունին: Այս թիւերը անհաւատալի կը թուէին "միօրեայ" վարժարանի մը համար: Ուստի, երկրորդ նամակով մը աւելի մանրամասն տեղեկութիւն խնդրեցի և Տնօրէնուհի Տիկ. Ռ. Թաթուլեանէն ստացայ հետևեալ բացատրականը-

"Վարժարանի արևմտահայերէն և արևելահայերէն բաժինները զատ-զատ են:

Երեխաները 3 տարեկանից կ'ընդունուեն վարժարանի մանկապարտէզը, որտեղ կը յաճախեն մինչև 5 տարեկան:

5-ից մինչև 7 տարեկան կը յաճախեն նախակրթարան բաժինը, տառաճանաչու-թեան դասարանները: Արևմտահայերի և արևելահայերի դասարանները զատ են :

7-ից մինչև 16 տարեկանները կը յաճախեն առաջինից մինչև 9-րդ դասարանները: Արևմտահայերը և արևելահայերը զատ դասարաններում են:

Միայն երգի դասի պահերին, հանդէսներին, մասնաւոր այլ ծրագրերի ժամանակ արևմտահայերը և արևելահայերը միասին կ'աշխատեն:

Մանկապարտէզից մինչև 9րդ. դասարան, հայոց լեզուն և պատմութիւնը դասաւարտում են արևելահայերէնով (հայաստանեան և դասական ուղղագրութեամբ) և արևմտահայերէնով (դասական ուղղագրութեամբ):

Համարեայ բոլոր աշակերտների համար հայերէնը 2-րդ կամ 3-րդ լեզու է:

Արևմտահայերէն բաժնում երեխաների մեծ մասը անգլիախօս են:

9-րդ դասարանի վերջում աշակերտները յանձնում են աւարտական քննութիւնը, որը համապատասխանում է օտար լեզուի (ոչ մայրենի լեզուի) իմացութեան անգլիական GCSE -ի մակարդակին:

Այսքան բաժանմունքներով միօրեայ վարժարան մը զարմանալի թուեցաւ ինձի: Ուստի, այս "երևոյթ"-ը պարզելու համար որոշեցի ընդունիլ հրաւերը: Եւ ուրեմն Կիրակի, 22

Յունուար 2017-ին հասայ դպրոց, որ Լոնտոնի Ealing թաղամասին մէջ տեղական մեծ դպրոց մըն է՝ բազմաթիւ դասարաններով, հաշարանով, բակով:

Թահթայեան վարժարանի 25-ամեայ և 30-ամեայ Յուշամատեաններէն կը տեղեկանանք թէ 1978-ին, Լոնտոնահայ Համայնքային և Եկեղեցական Խորհուրդի ջանքերով և Գէորգ Թահթայեանի բարերարութեամբ սկսած է գործել այս միօրեայ վարժարանը, հայերէնի ուսուցում ջամբելով հարիւրաւոր աշակերտներու:

Իւրաքանչիւր աշակերտի ծախսը 500 Փաունտ է տարեկան, որուն 195 Փաունտը միայն կարելի է վերստանալ աշակերտներու վճարումներէն: Մնացեալ ծախսերը ներկայիս կը հոգան զանազան բարերարներ (մէկ Փաունտը գրեթէ համապատասխան է մէկ Եւրոյի):

Այս բոլոր տեղեկութիւնները ստանալէս յետոյ մտանք դպրոց, առաւօտեան ժամը տասնին: Աշակերտները հաւաքուած էին արդէն: Կիրակնօրեայ դասաւանդութիւնը սկսաւ Տէրունական Աղօթքով և ՀՀ օրհներգով: Յետոյ մտանք դասարան մը, ուր կային 8-11 տարեկան շուրջ 40 աշակերտներ (իրենց վարժարանի 2-րդ, 3-րդ, 4-րդ դասարանները), արևելահայ և արևմտահայ՝ խառն, իրենց ուսուցիչներով միասին:

Սկսայ դասաւանդել՝ իմ հեղինակած լսատեսողական մեթոտի բանաւոր հաղորդակցութիւն սորվեցնող առաջին դասը, որ երեք անձերու միջև փոխանակուած տասը նախադասութեամբ (**dialogues**) ինքնածանօթացման տեսարան (**sketch**) մըն է: Թաղիքէ պաստառին փակցուող շարժուն նկարներուն օգնութեամբ տեսարանը կազմելով և իմ շարժումներով ու դերակատարումով ներկայացուցի նիւթը: Աշակերտները դիւրութեամբ հասկցան ամէն մէկ բառի ու նախադասութեան իմաստը (նիւթին բացատրութեան փուլը): Անցանք հաւաքական կրկնութիւններով փոխասացութիւններու վերարտադրութեան փուլին (**reproduction des dialogues**), որ նոյնպէս յաջողութեամբ վերջացաւ: Աշակերտները դժուարութիւն չունէին և շատ արագ կարողացան վերարտադրել նիւթը: Բնականաբար ժամանակ չունէինք բազմաթիւ անգամներ կրկնելու՝ մինչև որ գոց սորվին նախադասութիւնները: Ատիկա տան մէջ, ձայներիզի օգնութեամբ կատարուելիք աշխատանք մըն է: Եւ քանի որ այդ անհատական աշխատանքը չէր կատարուած, զանց առնուեցաւ աշակերտներու դերակատարութեան փուլը (**théatralisation du sketch**): Մեր նպատակն էր մեթոտին ուսուցման յաջորդական փուլերը ցոյց տալ ուսուցիչներըուն: Ուստի, շարունակելով, հարց-պատասխանի ձևով խօսեցուցի աշակերտները՝ միշտ մնալով առաջին դասի փոխասացութիւններու սահմաններուն մէջ: Ճիշդ պատասխանները ծափերով կը դիմաւորէինք:

Այս նորութիւնները հետաքրքրած էին աշակերտները, բայց ժամը լրացած էր: Ուրիշ խումբ մը աշակերտներ խուժեցին դասարան: 5-7տարեկան փոքրիկներ էին Հայու պելտուն աչքերով: Թաղիքէ պաստառին վրայ քանի մը նկար աւելցնելով անցայ երկրորդ դասին, ուսուցման փուլերու նոյն հերթականութեամբ հասնելով երկրորդ դասի վերջաւորութեան դրուած մանկավարժական երգին, որ կը սորվեցնէ բնութեան տարրերը (ծով, անտառ, ծառ, երկինք) իրենց գոյներով միասին: Աշակերտները սորվեցան և երգելով հեռացան դասարանէն, իջնելով հաշարան:

Ճաշի ընդմիջումին յետոյ նոր աշակերտներ հասան դասարան և ուսուցիչներուն քովը նստան: Մեծերն էին, 10-16 տարեկան, միշտ՝ խառն, արևմտահայ և արևելահայ (Թահթայեան վարժարանի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ դասարաններու աշակերտները): Այս անգամ Տիկ. Թաթուլեան, որ նախապէս քննած էր արևմտահայերէնի համար իմ պատրաստած լատենոդական այս Ձեռարկը և գիտէր թէ հայերէնի հիմնական և առաջին մակարդակը ներկայացնող այս երեք գիրքերէն բացի ունիմ նաև երկրորդ և երրորդ մակարդակներու ուսուցման յատկացուած դասագիրքեր, խնդրեց որ երկրորդ մակարդակով դասաւանդեմ, երրորդ մակարդակը քիչ մը բարձր գտնելով իրենց աշակերտներուն համար: Ուրեմն, երկրորդ մակարդակի գիրքը դասարանի ուսուցչուհիին փոխանցելով խնդրեցի որ ինք զատէ իր ուզած նիւթը: Համաձայնեցանք տիեզերագնացութեան մասին խօսակցական տեսարան մը ներկայացնող դասին մասին: Որովհետև, բարեբախտ զուգահեռութեամբ մը, այս աշակերտներու այդ օրուան դասն ալ ճամբորդութեան մասին է եղեր: Որով, աշակերտները արդէն գիտէին նաև, օդանաւ, կառք, ինքնաշարժ բառերը: Ինծի կը մնար բացատրել տիեզերք, տիեզերանաւ, տիեզերագնաց, տիեզերագնացութիւն բառերու իմաստը: Անհրաժեշտ էր նաև տալ քերականական բացատրութիւններ "ա" յօդակապի օգնութեամբ կազմուած "բարդ" բառերու և "ութիւն"ով վերջացող "ածանց"ներու մասին: Ուստի, գրատախտակին վրայ գրեցինք տիեզեր(ք), տիեզեր-ա-նաւ, տիեզեր-ա-գնաց, տիեզեր-ա-գնաց-ութիւն, նաև գին-ե-գործ-ութիւն, քրիստոն-է-ութիւն, բացատրելով միաժամանակ հնչիւնափոխութեան որոշ կանոններ:

Կէսօրից յետոյ ուսուցիչներու համար կարդացի դասախօսութիւն մը՝ այս լատենոդական մեթոտի գիտական սկզբունքներուն մասին, բացատրելով թէ լեզուի ուսուցման արդի մօտեցումին համաձայն, անհրաժեշտ է անժանօթ լեզուն նախ հասկնալ ու պատասխանել սորվեցնել և յետոյ անցնիլ կարդալ-գրելու: Ա՛յս հերթականութեամբ պէտք է դասաւանդել՝ եթէ կ'ուզենք որ աշակերտը չմնայ հասկացողութեան մակարդակին, այլ նաև կարենայ պատասխանել, այսինքն խօսիլ: Բացատրեցի նաև թէ լատենոդական այս մեթոտը կ'ընթանայ քերականական յառաջխաղացումով (**progression grammaticale**), որ հեղինակին կողմէ կազմուած է հայերէնի տարրական բառապաշարի (**vocabulaire de base**) 1000 բառերէն ամէն մէկուն յաճախականութիւնը (**fréquence**) հաշուելով և ամենաբարձր յաճախականութիւն ունեցող բառերը առաջին դասերուն ուսուցանելով, միւսներն ալ՝ իրենց հերթին: Այսպէ՛ս պատրաստուած են այս Ձեռնարկի երեք դասագիրքերը, որոնք գլխաւորաբար յօդերով, հոլովներով, բայի խոնարհումներով, նախադաս և յետադաս մասնիկներով բառերը իրար կապելու և նախադասութիւն կազմելու ձևերը կը սորվեցնեն: Այսինքն, նախ՝ լեզու կը սորվեցնեն և յետոյ՝ կարդալ ու գրել:

Յետոյ անցանք գրաւոր լեզուի ուսուցման: Ուսուցիչներուն բացատրեցի թէ ժամանակավրէպ է այբուբենի տառերը մէկիկ-մէկիկ սորվեցնել: Ընդհակառակը, աշակերտը բառի գրելակերպը պիտի իւրացնէ ամբողջական կերպով, որպէս բառապատկեր: Ուսուցիչը տուեալ դասի գլխաւոր 10-13 բառերէն որևէ մէկը շատ խոշոր և գնտածն մեկնակէտերով կը գրէ գրատախտակին վրայ: Աշակերտները իրենց աչքերը բանալ-գոցելով պիտի մտապահեն բառին գրելակերպը և իրենց ցուցամատերով օդին մէջ պիտի գրեն զայն: Ուսուցիչը կը հետևի օդին մէջ գրող ցուցամատերուն, ի պահանջել հարկին կը միջամտէ, աշակերտին թելադրելով բանալ աչքերը և լաւ դիտել բառը, յետոյ դարձեալ աչքերը փակելով հիշող գրել բառը: Ուսուցիչը ամէն մէկ տառի անունը,

հնչիւնը, անոր շորս գրելածները (մեծատառ,փոքրատառ, տպագիր և ձեռագիր) կը բացատրէ: Այս գործողութենէն յետոյ աշակերտները իրաւունք ունին բառը ընդօրինակելու իրենց տետրակներուն մէջ:

Տառահանաչութեան ուսուցման այս ձևը ժամանակի մեծ խնայողութիւն մըն է և տառերը յիշողութեան մէջ միանգամընդմիշտ ամրացնելու կը ծառայէ: Գրահանաչութեան այս նոր ձևի կիրարկումը շատ մեծ հետաքրքրութիւն ստեղծեց, մանաւանդ երբ ցոյց տուի ամէն մէկ դասի 10-13 գլխաւոր բառերուն համապատասխանող պիտակները (étiquètes), զորս աշակերտները պիտի կտրեն և անոնց մէկտեղումով ուսուցչին թելադրած նախադասութիւնը պիտի գրեն: Պիտակներով գրելու այս ձևը պէտք է նախորդէ գրիչով սպիտակ թուղթի վրայ գրելու դասական ձևին, որովհետև ո՛չ միայն բառի գրելածը կը սորվեցնէ, այլ նաև բառին կազմախօսութիւնը (morphologie), քանի որ յօդերը, հոլովակերտ մասնիկները, բայի խոնարհիչները տարբեր պիտակներով ներկայացուած են: Աշակերտները պիտի գտնեն համապատասխան այդ մասնիկները և բառին կցելով ուսուցչի թելադրած նախադասութիւնը պիտի կազմեն: Այս փուլէն յետոյ իրաւունք կ'ունենան 10-13 բառերը գրիչով ընդօրինակելու իրենց տետրակներուն մէջ: Սակայն, յաջորդ դասին օրը, պէտք է պատրաստ ըլլան ուղղագրութիւն ընելու: Այս անգամ ուսուցիչը խառն կերպով կը թելադրէ այդ և նախորդ դասի (դասերու) պատկանող նախադասութիւնները և աշակերտները թուղթի վրայ գրիչով կը գրեն թելադրուածը, ջանալով ուղղագրական սխալ չ'ընել:

Երեկոյեան, խանդավառ մթնոլորտի մէջ և "ընտանեկան" նկարով վերջ գտաւ մեր այս հանդիպումը, որ լսատեսողական մեթոտի ծանօթացման և ուսուցիչներու վերապատրաստման յաջող փորձ մը եղաւ:

Իսկ ինծի համար 22 Յունուար 2017-ի այդ Կիրակին եղաւ երազային օր մը: Տեսնել այդ քա՛ն աշակերտներ, այդ քա՛ն ուսուցիչներ, այդ քա՛ն դասարաններ, արևելահայերէնի ուսուցում դասական ուղղագրութեամբ, նոյնպէս արևելահայերէնի ուսուցում այս անգամ հայաստանեան ուղղագրութեամբ, արևմտահայերէնի ուսուցում՝ դասական ուղղագրութեամբ, ամէն մէկը զատ-զատ դասարաններու մէջ, տարբեր ուսուցիչներով, և տակաւին Հայոց պատմութիւն, նաև երգ ու պար: Կարծէք Արևելքի մեր հայկական *ամենօրեայ* վարժարաններէն մէկը ըլլար՝ Եւրոպայի կուրծքին: Անհաւատալի էր, բայց՝ իրաւ: Երևոյթ մըն էր Գէորգ Թահթայեան "*միօրեայ*" *ազգային վարժարանը*: Թերևս աւելի հիշող պիտի ըլլար ըսել՝ օրինակելի դպրոց մըն էր: Երանի՛ օրինակը վարակիչ ըլլար ուրիշ միօրեաներու համար:

Յոյսով լեցուած վերադարձայ Փարիզ: Վարձքը կատար՝ ուսուցիչներուն և Տնօրէնուհի Տիկին Ռուզաննա Թաթուլեանին, ինչպէս նաև հոգաբարձուներուն, ծնողական յանձնախումբին և մեծ ու փոքր բարերարներուն:

Դոկտ. Հիլտա Գալֆայեան-Փանոսեան.
Փարիզ, 27 /01/2017.